

ԳԵՈՐԳ ԱՊՏՈՒԼԼԱՅԻ ՆԱՄԱԿՆԵՐԸ ՅՈՎՀԱՆՆԷՍ ԶՀՆՅ. ՄԿՐԵԱՆԻՆ

ԱՆԻ ԿԻՐԱԿՈՍԵԱՆ

1866ին *Բազմալեզու ծանուցում է առաջին հայ լուսանկարիչների մուտքը մշակութային կեանք: Դա ընդամենը երեք տասնամեակ անց էր այն ժամանակից, երբ Ֆրանսիայում 1839ին, Լուի Դագէրի շնորհիւ ծնւում է լուսանկարի հրաշքը:*

1866ականներին Օսմանեան Կայսրութեան մայրաքաղաք Կ.Պոլսում իրենց նորայայտ գործի աշխատանքներն են ծաւալում Ապտուլլահ (Ապտուլլահան)¹, եղբայրները: Չինայելով նիւթական մեծ ներդրումներ՝ նրանք զարգացնում են լուսանկարչական արուեստը եւ մի քանի տարուայ մէջ վաստակում պատուաւոր անուն եւ հեղինակութիւն հասարակութեան մէջ: Ինչպէս նշում է 1866ին *Բազմալեզու յոգուածագիրը*. «այսօրուան օրը կրնանք համարձակութեամբ ըսել, [...] որ այս վերջին երկու տարիներուս մէջ մեծ կատարելութեամբ հասցուցած են լուսանկարը, որչափ որ արուեստին հիմնական հանգամանքները կը ներեն եւ գուցէ Եւրոպայի լուսանկարի անուանի արուեստանոցներէն վար չեն մնար: Ազգերնուս մէջ առաջին անգամ այս արուեստին զարգացուցիչներն իրենք ըլլալով, ազգային յիշատակներու մէջ պէտք է չնոռացուի բնաւ անունսն»²:

Մէկ տարի անց՝ 1867ին Ապտուլլահների Պոլսի տեսարաններով մեծադիր լուսանկարների հաւաքածուն ցուցադրւում է Փարիզի Համաշխարհային Արուեստահանդէսում եւ արժանանում չքանչանի: Այդ նկարները պատկերում էին Օսմանեան Կայսրութեան մայրաքաղաքի պատմական շէնքեր, գիւղական տեսարաններ եւ երեւելի անձանց դէմքեր: Նրանց մասին գովեստի տողեր են գրւում *Բազմալեզու*, Լոնդոնի *Թայմ*ում եւ փարիզեան մամուլում: *Թայմ*ը գրում է. «Չգիտեմք ուրեմն այս լուսանկարիչները որ ազգի եւ որ կրօնին են պատկանում, բայց ինչ հաւատքի տեր էլ լինեն, իրենց աշխատանքները սքանչելի են», իսկ *Բազմալեզու աւելացրել է*. «կրնանք ապահով-ցրել գիտենք՝ որ իրենց պատկերներուն լուսն շատ աւելի պիտի դիմանայ իրենց անունն ու համբաւը»³: Իսկ անգլիացի ճանապարհորդ Մորէյը (Հաւանաբար՝ Murray) իր առձեռն ուղեցույցի մէջ (*Guide des Voyageurs*) այսպէս է գրում Ապտուլլահների մասին. «...Ապտուլլահ եղբայր որոնք կայսեր եւ արքունի պալատան լուսանկարիչքն են ատենց մէջ ամենէն անուանիներն են: Իրենք ազնուական ընտանիքէ են, եւ իրենց տաղանդովը եւրոպական համբաւ ստացած, որու դէմ արուեստակիցներէն ոչ ոք կրցաւ մրցիլ ինչուան հիմա: Տաճկաստանի մայրաքաղաքին մէջ գտնուած յարգի եւ հետաքրքրական բաներէն մէկն ալ այս ճարտարներուն ձեռակերտերն սեպուելով, ճանապարհորդք քաղքէն բաժնուելու ժամանակին, ասոնցմէ յիշատակի լուսանկարներ կ'առնուն, կը տանին: Ասոնց գործարանն է՝ ի մեծ փողոց ի՝ Բերա»⁴. Իրենց լուսանկարաց հաւաքմանը մէջ կը պարունակուին Պոլսոյ ընդհանուր տեսարանք, արդի կայսերական ընտանեաց պատկերք, եւ նոյն կայսերական ընտանեաց բոլոր նախահարք որոնք հին պալատան մատենադարանին մէջ

գտնուած պատկերներէն առնուած են: Ասոցմէ գատ մաւ տէրութեան բոլոր երեսիլի անձանց պատկերներն կը գտնուին այս ճարտարաց քով ...»⁵:

Եղբայրներից ամենաարժանաւորը, որ առանձնանում էր իր ազգանունէր գործունէութեամբ, Գէորգ Ապտուլահն էր (1839-1918): Նա ծնունդ է կ'Պոլսի միջագիւղ/Օրթագիւղ արուարձանում, որ այն տարիներին մասւորականութեան եւ ազնուական դասակարգի ամենաառաջնայէմ եւ ամենազարգացած կենտրոնն էր: Ընդունուելով լուսաւորչական վարժարանը՝ Գէորգն աշակերտում է Մկրտիչ Պէշիկթաշեանին (1828-1868) եւ շարունակում կրթութիւնը Վենետիկի Մուրատ-Ռափայէլեան վարժարանում: Այստեղ նրան դասաւանդում է Հայր Դեռոնդ Ալիշանը (1820-1901)՝ իբրեւ հայ մատենագրութեան եւ պատմութեան ուսուցիչ: 1853ին վարժարանի ուսումնական տարուայ տունէլների մէջ տեսնում ենք Գէորգ Ապտուլահնեանի անունը: Իբրեւ լաւագոյն սան՝ նա փայլուն գնահատականներ եւ մրցանակներ էր ստանում քրիստոնէական վարդապետութեան, պատմութիւն սուրբ գրոց, ազգային պատմութեան, հայերէն, ֆրանսերէն եւ իտալերէն շարագրութեան ու լեզուների, աշխարհագրութեան, ուրուագրութեան, «գլիմագծութիւն ըստ տպագրի» եւ դրուագծութեան առարկաներից: Բացառիկ էին Գէորգի ընդունակութիւնները իւզաներկ «պատկերահանութեան» ասպարէզում: Աւարտելով վարժարանը՝ նա վերադառնում է Պոլս, որտեղ եղբայրների՝ Վիլհէմի եւ Յովսէփի հետ միասին սկսում են լուսանկարչութեան գործը: Այս մասին նա յիշում է նաեւ իր գրութիւններում. «Երեք եղբարքս, ոգի ի բռն աշխատելով, եւ չի խնայելով ոչ դրամ եւ ոչ որ եւ իցէ գոհողութիւն, շատ սը փորձերէ յետոյ, յաճախողները գոհ ընելու չափ արուեստը յատաջացուցինք, բայց մեր ճաշակը լիովին գոհացնելու չափ չէր եղածը»⁶: Յետագայ տարիներին նրանք կատարելագործում են իրենց արուեստը եւ հասնում բարձունքների: Եղբայրներից Գէորգը իր ապրած ողջ կենսաքի ընթացքում համատեղում է մասնագիտական ստեղծագործ աշխատանքը ազգային-մշակութային, հասարակական ազգանունէր գործունէութեան հետ:

Վկայուէնք Գէորգի կատարած նշանակալից քայլերից: Բերա թաղամասում գտնուող նրա լուսանկարչատունը մեծ համբաւ էր վայելում իր բարձր արուեստ աշխատանքով եւ ինչպէս յիշում էին նրա ժամանակակիցները. «...բոլոր Եւրոպա ու մինչեւ Ամերիկա ձեռքէ ձեռք կ'երթան իրենց լուսանկարները: Ու եւ իցէ երեսիլի անձ որ Պոլիս[էն] ամցնի, առանց Ապտուլահնեան ձեռքով լուսանկարուելու չ'երթար հոնտեղէն»⁷:

Բայց լուսանկարչական աշխատանքին յաջորդում էին հիւրասիրութիւնն ու զրոյցը, եթէ տունեայ անձր ինչ-որ կերպ կարող էր առնչուել հայոց խնդիրներին ու ցաւերին: Չէ՞ որ դրանք 1870ականներն էին, երբ հայ ժողովրդի գլխին ճոճւում էր թուրքի հաթաղանն ու սուրը:

Ականատեսը լինելով իր անտերունչ ազգի նկատմամբ իրագործուող ամէնօրեայ կեղեքումներին եւ ոճիրներին՝ Գէորգ Ապտուլահն փորձում էր ծածուկ ու խիզախ հաղորդագրութիւններով թղթակցել եւրոպական եւ յատկապէս ֆրանսիական առաջնակարգ թերթերին՝ լուրեր յղել ուղղակի իրական աղբիւրներից, լուսալով արթնացնել քաղաքակրթ Եւրոպայի խնացած խիղճը: Այդ օրերի եռանդուն ազգային գործիչ Մինաս Չերազը (1852-1929) գրում էր. «խանդավառ հայրենասէր մ'էր, եւ կրնա՞ր ուրիշ բան ըլլալ, քանի որ անմահ Ալիշանին աշակերտած էր: Իր արուեստանոցը ժամադրաւալայն էր հայ հայ-

քննասերներու եւ օտար հայասերներու: Բաւական էր որ Կոստանդնուպոլիս եկած եւրոպացի մը տեսակցութիւն մ'ունենար այդ համակրելի հայու հետ, իսկոյն հայասեր դառնալու համար: ...Ինք քաջալերեց գերման հնագետ Մոդ-մանը⁸, որ 40 տարի զոհած էր Վանի սեպագիրները կարդալու, եւ *Դանի*⁹ քրդակից Տոմաժէն, որ հայանպաստ յօդուածներ կ'հրապարակէր այդ կարեւոր թերթին մէջ»¹⁰:

Վեհանձն եւ անշահախնդիր հոգով զինեալ Հայորդին նախաձեռնում է հրատարակել մի շատ կարեւոր տեղեկագիր՝ *L'Armenie et les Armeniens* խորագրով Փրանսերէն գրքոյկը՝ իր բարեկամ եւ մտերիմ, Փրանսագէտ Յակոբ Իսկենտէրի (1871-1949) հետ՝ սեփական անունը չփոխեցելու համար քոզար-կուելով Baron d'Este ծածկանուամբ: Գրքոյկը յղում է մեծ պետութիւնների «դաշինքներուն, որպէս զի, Պերլինի վեհաժողովին մէջ երբ հայկական հարցը մէջտեղ գալ, խնդրոյն վրայ ստոյգ տեղեկութիւն ունենան»¹¹:

Գէորգ Ապտուլլահը ազգային բարենպաստ ձեռնարկների մասնակցում էր թէ՛ նրեթական եւ թէ՛ բարոյական աջակցութեամբ: Կրիկեան, Դարոցասէր եւ Միացեալ Ընկերութիւններին նա մշտական նեցուկ էր եւ սատարող:

Իսկ Զեբազի վերը իշատակած Մոդմանի Վանի Հայ Բեւեռածն Արժանագրութիւնը կամ Բեւեռագիր Յիշատակարան Հայաստանեայց ճառը (57 էջ) 1872ին Գէորգ Ապտուլլահը թարգմանում է գերմաներէնից ու հրատարակում¹²: Եւ յետոյ իրրեւ յարգանքի ու երախտագիտութեան ցոյց՝ իր լուսանկարչատանը կազմակերպում է այդ բանախօսութեան լսումներն ազգասէր հրաւիրեալների համար եւ իրականացնում գրքոյկի վաճառքը, որից գոյացած գումարն էլ նուիրում է հեղինակին՝ Հայ ազգին մատուցած ծառայութեան համար: Այդ ուսումնական ժողովներին այսպէս է արձագանգում նկարչի ուսուցիչ եւ բարեկամ Հմայեակ Պապիկեանը. «Այս ամէն ազգային թշուառութեան մէջ Դուք Չեր օրինակով ցոյցուցիք ամենուն, որ եթէ բարեսէր կամք եւ գործունեայ ջանք ըլլայ, յաջողութիւնը եւ յառաջադիմութիւնը անշուշտ ձեռք կը բերուի, եւ դարուս ազգային պատմութեան մէջ լուսաւոր կ'էտ մը կը գրաւէք թէ՛ Չեր գեղեցիկ արուեստին մէջ ըրած յառաջադիմութեան, եւ թէ՛ Չեր բարի օրինակուն եւ ազգերնուս պատուոյն եւ փառացը ածելուն Չեր ունեցած մեծ ձեռնադրութեամբ...»¹³:

Այս նամակի եւ սրան յաջորդող բոլոր ընտելագրումների վառ ապացոյցն էր Գէորգ Ապտուլլահի նշանակալից մասնակցութիւնը 1878ի Ռուս-թուրքական Պատերազմում ռուսների տարած յաղթանակից յետոյ Սան Ստեփանոյում կնքուած պայմանագրի արարողակարգին: Նա իրրեւ պալատական լուսանկարիչ ականատեսն էր դիւանագիտական ողջ գործընթացին: Բանակցութիւնները տեղի էին ունենում Առաքել պէյ Տատեանի ապարանքում, ուր եւ իջեւանել էր ռուսական մեծ իշխան, հեծելազօրի զօրավար Նիկոլայ Նիկոլայեւիչը: Վերջինս արդէն Պոլսում ծանօթացել էր Ապտուլլահ եղբայրների գործին եւ լուսանկարուել նրանց մօտ: Ի նշան գոհունակութեան՝ զօրավար Նիկոլայեւիչը իր մօտ՝ Տատեանի ապարանք է կանչել Գէորգ Ապտուլլահին՝ իր բանակի սպայակոյտով եւ զինաւոր զօրավարներով միասին խմբանկարուելու համար: Իրականացուած խմբանկարում եղել են 197 անձինք, որոնց թւում՝ իշխաններ եւ պալատականներ, ծովակալներ ու գնդապետներ, ցարական բանակի հայ եւ ռուս զօրավարներ:

Ոգեւորուած Սան-Ստեֆանոյի պայմանագրի հայանպաստ դրոյթների յուսադրող կանխատեսումներով, Գէորգ Ապտուլլահը Պոլսի վերադարձին իրենց բնակավայրում կազմակերպում է ճոխ եւ մեծածախ խնջոյք՝ ի պատիւ ռուսական բանակում ծառայող հայ զօրավարների Դա խիստ զայրացնում է սուլթան Համիդին, եւ միայն ռուս բարձրաստիճան այրերի միջնորդութեամբ արիասիրտ հայորդին ազատուում է պատօրհգ։ Գ. Ապտուլլահին սիրում եւ գնահատում էր ժամանակի ողջ հայ մտաւորական սերունդը։ Նա մտերիմ յարաբերութիւնների եւ նամակագրական կապերի մէջ էր արդէն ծովանկարիչ Յովհաննէս Ալմազովսկու, դերասան Պետրոս Աղամեանի, Հայր Ղեւոնդ Ալիշանի, ազգային եւ դրական գործիչներ Չերազի, Խորեն Նարպէյի, Ներսէս Վարժապետեանի, Սրբուհի Տիւսարի, Եւփիմէ Օտեանի, Թէոդիկի, Արշակ Զօպանեանի եւ այլոց հետ։

Բերելով երկու փոքրիկ հատուած Գ. Ապտուլլահին գրուած Հայր Ալիշանի եւ Տիւսարի նամակներից՝ կարելի է հասկանալ այդ բարեկամութեան խորքն ու լիւրժը։ 1872 Մայիսի 11ի իր նամակում Ալիշանը գրում է. «...Ես քեզն եւ եղբայրներդ ուրիշ բան կը սպասեմ. գործիքնիդ շալակեցէք, եւ քե ոչ շրջան մ'ընէք՝ զոնէ անկիւն մը կ'էշայստան, եւ քանի մը հարիւր տեսարաններ քերէք, նաեւ բեւեռագիրներ։ Բայց Վիէնիկ աղային ըսէ՝ որ այս բանս նազիկաճեմ քալումքով չ'ըլլար, քիչ մ'ալ հսկայաճեմ ըլլալու է, լաւ եւս ճարտարի՛նաճեմ։ -Բարեացական ձեր Հ. Ղեւոնդ Մ. Ալիշանեան»¹⁴։

Ձի կատարւում այս ցանկութիւնը, թէեւ Գէորգը առաջարկում է միասին ճամփորդել։ Վերջինիս Ալիշանը պատասխանում է՝ «կրնաս եւ արդէն գուշակեալ, որ ես ծանրաւարժ եւ անվարժ մէկ մ'ըլլալով՝ չեմ կարող հրաւերքիդ ընդունող ըլլալ, եթէ լուստապօրեանս հրաշալի արուեստին պէս եւ անիի հրաշարուեստ մը զիս թոռացանէր Վանայ ծովուն եզերքը՝ գտնուելուս ոչ սակաւ գոհ կ'ըլլայի»¹⁵։

Իսկ Տիւսարը, որ մշտապէս վաբելում էր Գէորգի աջակցութիւնը, գրում էր. «Երանի քեզ դուք ըլլալուդ համար, եւ երանի մեզի քեզ նման բարեկամ ունենալնուս համար»¹⁶։

Շատ խօսուել է Ապտուլլահին ուղղուած Պոլսի Պատրիարքարանի Ժողովի ընտրած հայ դատի պաշտպանութեան պատուիրակներից մէկի՝ Նարպէյի նամակը՝ գրուած 1878 Մայիսին. «...Դուք՝ որ ազգին ուրախութիւնն էք, պարծանքը եւ նրա անուան ու պատուոյն լուսասփիտ տարածողները։ Լուսոյ որդիք, լուսոյ հետ է Ձեր գործակցութիւնը, խաւարը երբեք չպիտի յաջողի իր մռայլը Ձեր վրայ տարածելու... սիրտս, ցնծութեամբ կը խայտայ երբ կը տեսնեմ որ Ձեր անունը այսքան տարածուած է, եւ Ձեր տաղանդին արժէքը այսքան ճանչցուած է հոս (Պետեքրոք)։ Ձեր անունը պատիւը՝ շող մը կը տարածէ այն ազգին վրայ որ պատիւ ունի գձեզ իւր ճշմարիտ որդուցը նախակարգ դասուն մէջ տեսնելու։ Այն ազգին՝ որուն նուիրած էք Ձեր ազնուական սիրտը, բարձր համճարը եւ լուսարորքը միտքը»¹⁷։

Եւ իդուր չէր 1900ի Գեղուհի հանդէսը իր հրապարակած «Նշանաւոր Ազգայինք» շարքում յիշում նաեւ Գէորգ Ապտուլլահի անունը։ Իբրեւ ամենաբնութագրական բնորոշում յիշենք նաեւ Պոլսի պատրիարք Ներսէս Վարժապետեանի ելոյթը Պոլսի հայերի Ազգային Ժողովում, երբ քննարկուում էին ազգին վրայ ծանրացած կարեւորագոյն խնդիրներ։ Նա դիմում է Ժողովական-

ներին հետեւեալ խօսքերով. «Եթէ ունենայի յիսուն Ապտուլլահներ, կրնայի ազգիս ցաւերը մեղմացնել եւ բռնութեան ճիրաններէն ազատել»¹⁸:

Հրապարակում ենք Եղիշ Զարեհի Անուան Երեւանի Գրականութեան Եւ Արուեստի Թանգարանի (ԳԱԹ) ձեռագրային պահոցում պահպանուած լուսանկարչի 7 նամակները¹⁹, յղուած Պոլսի Պատրիարքական Փոխանորդի պաշտօնակատար Յովհաննէս ԲՀՆՅ. Մկրեանին²⁰:

Ներկայացուող նամակները բնութագրում են Գէորգ Ապտուլլահի եւ Մկրեան քահանայի միջեւ եղած ջերմ բարեկամական յարաբերութիւնները, որոնք էլ խթան են հանդիսացել նրանց ազգանուէր գործունէութեան:

Հրապարակուող նամակները բնագրի համեմատութեամբ ենթարկուել են կէտադրական եւ ուղղագրական փոքրաթիւ շտկումների:

1.

1876, Սեպտ. 13/25 Բերայ

Յարգոյ եւ սիրելի Տր,

Վաղը ճիշդ ժամը 8-ին Թայմս²¹ լրագրին բոթակիցը Կուլէնկա մեզի պիտի գայ եւ իրեն խօսք տուած ենք զՁեզ իրեն հետ տեսակցել տալու: Այս տեսակցութիւնը ինքն մեծաւ սիրով ընդունած ըլլալով՝ սա յարգի խօստումն ալ մեզի գրուցած է, թէ «ինքը բոլորով սրտիւ հայ խնդրոյն»²² հետ պիտի գրադի»: Մեծ շնորհք մըն է մեզի որ պիտի ընէ երեսելի բոթակիցը՝ առիթն օգուտ քաղենք:

Մնամք սիրով

Գ. Ապտուլլահ

2.

1876, Սեպտ. 21, հինգշաբթի Բերայ

Յարգոյ եւ սիրելի Հայր,

Անպատճառ եւ անվրէպ վաղը ուրբաք ժամը առաւօտեան 3-ին Պէյօղլու մեր գործարանը²³ գտնուիլնիդ կը խնդրեմ, զի Ձեզի հետ ի միասին քանի մը անձինք, որոց մենք եւս պիտի մասնակցինք, մեծ անձի մը հետ պիտի խօսակցինք ազգային գործոց²⁴ վրայօր: Կ'աղաչեմ չզլանաք այս կարեւոր խնդիրքս, զի ժամանակը շատ սուղ է: Բանակցելիք անձը վաղը կ'ես օրէն քիչ ետքը պիտի մեկնի կ'ըսեն Պօլսէն...

Մնամ սիրով եւ յարգանքօք

Գ. Ապտուլլահ

3.

(1878). շաբաթ

Սիրելի Հայր,

Հիմա ժամը 10-ին Պրայսը²⁵ եկաւ մեզ մ. Վալասին²⁶ հետ: 1/2 ժամ տեսնուեցանք, կարեւոր խօսքեր ըրինք. ցոյց չ'ուզեր, կ'ուզէ պատրիարքը տեսնել. <մանաւանդ> ինքը մախ երթալ տեսնել կ'ուզէ. խոստացայ իրեն ամէն դիրութիւն մատուցանել այս տեսակցութեանց մասին, չէզոք տեղեր կ'ուզէ ընդունել զպատգամաւորները ինչպէս ի Պատրիարքարան ըստ իրեն առաջարկութեան:

Վաղը եթէ կ'ուզես եկու զիս:

Վաղը առաւօտ ժամը 2-ին վարօր²⁷ կայ կամուրջին ի Պօսֆօր եպիսկոպոս մը գտիր բան մը ըրէ եկու:

Ես Էմիրիճի իսկելէն կ'սպասեմ զքեզ, եթէ մէկն ալ չգտնաս դարձեալ եկու զէն²⁸ չունի²⁹ Յովակիմեանին³⁰ կը գրեմ որ ինքն ալ զայ մոյն շոգենաւով: Յոյց չ'ուզեր ըսի, պարզութիւն, զգուշութիւն, մանաւանդ այս է որ պատուիրեց ինձ: Շատ խօսքեր ըրիք ի միասին:

Գ. Ապտուլլահ

4.

Սիրեցեալդ իմ Տէր Հայր,

Այսօր տէր Թադէոսը եկաւ ինձ եւ ըսաւ թէ ինքը մնակ կարող չէ Դպրոցատէր Հայուհեաց ընկերութեանը³¹ ի նպաստ մուկիստոսներ բաժանել: Ինքը միայն իւր ծովսերունդն դիմել կարող է, բայց միւս տոմսերուն համար կ'ըսէ, պէտք է որ ուրիշներ եւս մասնակցին եւ իւրաքանչիւրն հաւաքող քահանայից որոշեալ թուով անուանց ցուցակ մը առնու կամ հետը ունենայ որպէս զի աշխատանքը այսպէս բաժնուած ըլլալով դիւրութիւն ըլլայ եւ շփոթութիւն չծագի:

Կ'աղաչեմ, Սիրելի Հայր, այս մասին Ձեր աջակցութիւնը մի զլանաք, ոչ թէ Դուք եւս հաւաքելու ելլէք, այլ այս տոմսակներուն բաժանումը ըսած կերպովս տնօրինելու աշխատանքը յանձն առնուք: Շատ կ'աղաչեմ, դիւրացուցէք ինձ այս ձեռնարկը եւ երախտապարտ կացուցէք:

Ձեր անձնուր բարեկամ

Գեորգ Ապտուլլահ

Բերա, 17 Սեպտ. 1880

Դ-շաքքի

5.

(1886-1887)

Հինգշաբթի, 18/30 Սեպտ.

Սիրելիդ իմ Հայր Սկրեան

Վաղը, ուրբաթ մտադիր եմ Սքեֆանո³² երթալ տիկին Տիւսարին³³ այցելութեան: Եթէ կ'ուզէք միատեղ երթանք: Առաւօտեան յարմար ժամն է ըստ ֆրանկոյ 10, 20 (որ է ըսել ըստ տաճկաց 2-ի քառորդ անցած): Սիրեցեճի կայարանը Ձեզ պիտի սպասեմ:

Գիտէք որ խօսք տուած ենք եւ ինքն ալ պիտի սպասէ: 4-ին անպատճառ կայարան գտնուելու է:

Ի տեսութիւն առտու

Ողջ լըբուք

Գ. Ապտուլլահ

6.

1887, Յունիս 19 Գահիրէ³⁴

Ամենասիրելիդ իմ Հայր Սկրեան,

Իմ երկար ժամանակեայ լռութիւնս պատեհ առքիւ կ'ընդհատեմ: Մկրտիչեան ազնիւ գերդաստանէն Համբարձում Էֆենդին իւր ընտանեօքն դէպ ի Պոլիս կը մեկնի եւ իւր մեկնման մախընթաց գիշերն, այսինքն այս երեկոյ, բարի ճանապարհ մաղթելու դիտման իրեն եկած եմ իմ եղբորս³⁵ հետ միասին: Միթէ կարելի է որ այսպիսի յարմար առիթ մը փախցունեն արտայայտելու համար Ձեզ իմ բարեկամական անկեղծ զգացումս եւ այն քաղցր տպաւորութիւնը զոր Ձեր անձիս բարեկամութիւնը բողած է սրտիս վրայ: Երկար ժամանակ չգրեցի Ձեզ, կ'զգամ յանցանքս ու մեղքս քաւելու համար Ձեր անհուն ներողամտութեանը կը դիմեմ: Ահա այժմ ես ալ եզիպտացի եղայ, ես ալ այս երկրիս կիզիչ արեւուն ներքեւ հեղաք³⁶, եղայ, բայց սրտու զգացմամբ

եւ ըղեղովս եմ ինչ որ էի. նոյն Գեորգն, նոյն Ապտուլլահն: Միայն զգացմունքն, եւ նորահաստատ Գործարանին կարգադրութիւնները եւ ապագային պատրաստութիւնները զիս կերպով խստիւ կ'արգելեն որ աւելի ստեպ թոթակցիմ իմ բարեկամացս հետ. այս ալ ներելի է անշուշտ այնպիսեաց կողմէն որոնք գիտեն ու կը գնահատեն հարկին եւ պարտաւորութեան օրէնքը: Գործարանին բացման առաջին ամիսը բաւական յաջող գնաց գործերն, բայց այժմ օղեղուն ջերմութեան պատճառաւ ինչպէս ամէն գործ, այսպէս մեր գործերն ալ կերպով մը դադարման մէջ են: Բայց մենք յոյս ունինք, որ յառաջիկայ աշնան բաւական կարեւոր գործեր պիտի ունենամք ու մեր յոյսն ու աշխատանքը պիտի պսակուին յաջողութեամբ, առ այժմս յուսամք յԱստուած:

Եգիպտոս շատ հետաքրքրական երկիր մը երեւաց մեզ եւ իրօք ալ հետաքրքրական է, պատմական, արուեստական, հնագիտական, նկարչական շատ գեղեցիկ. յոյս կայ եւ սիրուն բաներ կան զորս առանձինն լուսագրելով²⁷ պիտի հրատարակեն յառաջիկայ ժամէն:

Եգիպտոսի բնական եւ արուեստական գեղեցկութեանց Դուք արդէն ծանօթ էք որով ինձ հարկ չմնար այս բաներով երկարախօսել Չեզ: Միայն որչափ ալ գեղեցիկ եւ հրապուրիչ ըլլայ, երկիր մը, հայրենեաց, սիրելեաց, բարեկամաց յիշատակին քաղցրութիւնքով բան մը չգօրէր մանաւանդ որ ընկերութեան, հաղորդակցութեան եւ համապատասխանող գաղափարներ յորում կը կայանայ ճշմարիտ հաճոյք մտաւորական, այս բաները զխաւորապէս կը պակսին հոս եւ ես ալ գիտէմ ինչ մեծ ախորժ կ'զգամ այսպիսի ընկերակցութիւններէն: Իմ սիրած նկարագիրս գիտէք արդէն, այն նիւթերն որ մեր ազնիւ եւ սիրելի Կիւմիշկերտանին է եղբարց տանը մէջ սովորական եղած նիւթերն են[.] ահա հոս կը պակսին բնական այն քաղցր խօսակցութիւնները, վասնզի որ ազգութիւն քիչ շատ քաղաքականութիւն, ընկերական խնդիրներ, զուցէ կան փիլիսոփայութիւններ, այսպիսի գաղափարներ խիստ քիչերու բով կը գտնեն կամ չեն գտներ ըսելու կը համարձակիմ. որով մեր կեանքը բոլորովին նիւթական (*անընթ-*) կեանք եղաւ, բայց ինչ պէտք է ընել, քանի որ հարկը պարտք դրած է վրաս գոնէ աս վայրկեանիս մոռնալ այդ վերոյիշեալ քաղցր խօսակցութիւնները: Սա վայրկեանիս, ահա ներսի սենեակը արաբական ուղ կը զարնէ երիտասարդ մը եւ հանդիսատես բարեկամք ոհ, քաման, քաման²⁸ կը կանչին եւ *bis, bis* ըստ երոպացոց, ու կ'ստիպեն զիս որ թողում նամակս ու ներս երթամ: Ուստի կը խնդրեմ որ ներողամիտ ըլլաք, զի ես ալ օրումս աշխատանքներէն խօսջեալ եմ եւ կ'ուզեմ այդ արաբական սրտառու իշխանակները լսելով մտածեմ հայրենեացս եւ սիրելեացս վրայ որոց շարքին մէջ էք դուք եւս, ով Սիրելիդ իմ Հայր եւ ազնիւ բարեկամ:

Ողջոյն մատուցէք այս ժամոյն սիրելիքս մեր եւ մանաւանդ առ Կիւմիշկերտան եղբօրս որոյ յառաջիկայ շաբթոս անպատճառ պիտի գրեմ:

Ընդունեցէք իմ սրտագին զգացումս եւ հաւատացէք իմ անյողողող բարեկամութեանս:

Գեորգ Ապտուլլահ



ABDULLAH FRERES

CONSTANTINOPLE



ABDULLAH FRERES

CONSEIL CAIRE



Գերապատիւ Տէր Հայր Սկրեան,
Վշտակիր բարեկամս,

Դարձեալ մահուան դառն հարուած մը³⁹ կու գայ խորտակել ի վաղուց վշտացեալ ու սգակիր սիրտդ, շատ լացիտ այս աշխարհիս վրայ, գիտեմ, Տէր Հայր, շատ լացուց գրեզ անողորմ մահ եւ յրագեցաւ կարծես դեռ: Այս սուկալի բշմամուտն ղէմ ինչ ընել պէտք է: Արցունքով չեմ կարող անոր գութն շարժել, աղաչանքէ, պաղատանքէ բան չհասկնար մա: Անձանօք աշխարհէ եկած օրէնքի մը անդատնալի վճիտը բերողն է մա, որ կ'ըսէ մեզ. «Չեմ ես բշմամի, ընդհակառակը ձեր ապագայ երջանկութեան պատգամաբերն եմ. ես եմ դուռն ընդ որ պիտի մտնէք յաիտենական երջանկութիւն, մի խաբուիք իմ դաժան դիմակէս, ես չեմ ձեր բշմամի, մանաւանդ աւետաբեր պատգամ կու տամ զձեզ բուն հայրենիքն տանիլ ուր չիք արցունք, չիք տառապանք»:

Ուրեմն, սիրելի եւ վշտակիր Տէր Հայր, սրբէ արցունքդ եւ հաւատա քու հոգեհատոր հարազատիդ այս պատգամը խրկողին եւ փառաւորեա զայն որ մեր խեղճութեան վրայ գրաւով կ'ուզէ շուտով հանել զմեզ այս զագիր ու պշգալի (sic) երկրես⁴⁰:

Չերդ անձնուէր

Գ. Ապտուլլահ

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

¹ Ապտուլլահ եղբայրների պապն Աստուածատուր Հիւրմիզեանն էր, որը սուլթան Ապտիւլ Համիդ Ա.ի օրօք վարել է արքունի պալատական մատակարարի պաշտօնը: Աագաննին հրապտուրած մրա բարձր արժանիքներով միշտ առաջարկել էր քրօնափոխ լինել: Բայց Աստուածատուրը փորձում էր անընդհատ խուսափել այդ առաջարկից: Ի վերջոյ մա գտնում է ելքը եւ մոլեռանդ պալատականների քերանը փակելու համար տալիս ճիշտ պատասխան. «անունս Աստուածատուր կը նշանակէ Ապտուլլահ, կրեաք այսունհետեւ գիտ այդ անունով կոչել, եւ այսպէս թէ՛ զձեզ զոհացուցած կը լինեմ եւ թէ խեղճ հանգարտ կը լինի» (Ե. Տայեցի, «Գեղորդ Ապտուլլահ. Կեանքն եւ Գործունեութիւնը», *Բազմավէպ*, 1929, էջ 5): Եւ այդ օրումնից Աստուածատուր Հիւրմիզը կը վերածուի Ապտուլլահի, որը եւ շարունակուեց որդուոց որդի: Արժէ անելացնել, որ Ապտուլլահեաններն ու Հիւրմիզեանները երկու եղբոր ժառանգներն են եղել, այդ թում՝ Եիրակի արքեպիսկոպոս Եղուարդ Հիւրմիզեանը:

² «Ապտուլլահեան Եղբարք Ի Կ. Պոլիս», *Բազմավէպ*, Փետրուար 1866, էջ 56:

³ «Ապտուլլահ Եղբարք Պոլսոյ», *Բազմավէպ*, Հոկտեմբեր 1867, էջ 320:

⁴ Նկատի ունի Բերայի կենտրոնական պողոտան:

⁵ «Էջ Մըն Ա. Մորրէի Անգղիացիոյն Ապտուլլահ Լուսանկարիչ Եղբարց Վրայ Գրած Տողերը», *Բազմավէպ*, Օգոստոս 1871, էջ 250:

⁶ Տայեցի, էջ 8:

⁷ «Ապտուլլահ Եղբարք Պոլսոյ», էջ 320:

⁸ Նկատի ունի գերմանացի հնագէտ Անդրեաս Մորդտմանն (Andreas David Mordtmann, 1811–1879), Վանի սեպագիր արձանագրութիւնների մասին մրա հիմնական աշխատութիւնն է՝ *Entzifferung und Erklärung der Armenischen Keilinschriften von Van und der Umgegend* (Վանի եւ շրջակայքի արձանագրութիւնների վերծանումն ու բացատրութիւնը), (Leipzig, 1872):

⁹ Փրանսիական թերթ՝ *Le Temps*, տպագրուել է 1861–1942:

¹⁰ Տայեցի, էջ 136:

¹¹ Նոյն, էջ 133:

¹² Այդ գրքերն են.- Մորթման, *Բեւեռագիրք Հայաստանայց*, գերմաներէն թրգմ. Գեորգ Ա. Ապտուլյահեան, Կ.Պոլիս, Տպ. Պօղոս Քիրիչեանի, 1872. նաեւ՝ *Հայ Բեւեռածէն Մրժանագրութիւնք Լուսաբանեալ Ի Մորթմանայ*, թրգմ. ի գերմ. Գեորգ Ա. Ապտուլյահեան, Կ.Պոլիս, Տպ. Յակոբ Պօյաճեանի, 1872:

¹³ 1872 Մայիսի 17ի նամակից, Տայեցի, էջ 162:

¹⁴ Նոյն, էջ 34:

¹⁵ Նոյն, էջ 35:

¹⁶ Նոյն, էջ 109:

¹⁷ Նոյն, էջ 39:

¹⁸ Նոյն, էջ 134:

¹⁹ Տե՛ս՝ ԳԱԹ, Թորոս Ագատեանի Ֆոնդ, 12րդ բաժին, վաւերագիր 22-37:

²⁰ Յովհաննէս Քենյ. Մկրեան (1831-1909)՝ ծնունել է Պարտիզակ գիւղում, կրթութիւնը ստացել Նիկոմիդիայում եւ ընդունել հոգեւորական կոչում: Յետագայում վարել է տարբեր կրթական եւ եկեղեցական պաշտօններ:

²¹ *Թարմզ* օրաթերթը Լոնդոնում հրատարակւում է 1876ից:

²² Հայ խնդիրը Հայկական Հարցն էր, որն օր օրի նոր ընթացք էր ստանում:

²³ Խօսքը Կ.Պոլսի Բերա (Պէյօղլու) թաղամասում գործող Ապտուլյահների լուսանկարչատան մասին է:

²⁴ Գեորգ Ապտուլյահը աշխուժօրէն մասնակցում էր ազգային գործերի քննարկմանը եւ գործընթացին՝ ներգրաւում օտար հասարակական եւ քաղաքական գործիչների: Այդ քննարկումների վայրը համարեա միշտ նրա լուսանկարչատունն էր:

²⁵ Ձէյմս Բրայս (1838-1922)՝ դերկոմս, անգլիական պետական գործիչ, իրաւաբան եւ պատմաբան: 1876ին հիմնել է Անգլո-Հայկական Ընկերութիւնը եւ որպէս նախագահ նոյն բուականին եղել Հայաստանում ու բարձրացել Արարատ լեռը: 1916ին հրատարակել է *The Treatment of Armenians in the Ottoman Empire (1915-1916)* փաստաթղթերի ժողովածուն՝ իր առաջաբանով եւ խմբագրութեամբ: Հայերի պաշտպանութեամբ հանդէս է եկել նաեւ իրապարակային ելոյթներով:

²⁶ Վալաս - անյայտ անձ:

²⁷ Վաթօր (իտալերէն՝ vapore) - շոգեմալ:

²⁸ Հաւանաբար թրք. գիսն՝ վնաս բառի աղաւաղում ձեւը:

²⁹ Թերեւս՝ թրք.՝ վնաս չունի, աղաւաղում ձեւով:

³⁰ Ապտուլյահների՝ Տ. Յ. Յովակիմեանի լուսանկարը պահւում է՝ ԳԱԹ, Ռաֆայէլ Պատկանեանի Արխիւ, քիւ 1505:

³¹ Կարոցասէր Հայուհեաց Ընկերութիւնը հիմնուել է 1875ին Կ.Պոլսի Հոփիսիմեան Վարժարանի սանոցիներին նախաձեռնութեամբ, յետագայում վերանուանուել է Դարոցասէր Տիկնանց Ընկերութիւն: Հիմնադրման գործուն աջակիցներն էին Տիւսաթը եւ նրա մայրը՝ Նազըր Վահանը: Պատուաւոր նախագահն էր Պատրիարք Ներսէս Վարժապետեանը, իսկ պատուաւոր անդամներն էին Յովհաննէս Ալվազովսիին, Գրիգոր Չիլինցիքեանը, Գ. Ապտուլյահը եւ ուրիշներ: 1882ին Ընկերութիւնը Կ.Պոլսում կազմակերպել է առաջին հայկական գեղարուեստական ցուցահանդէսը Ալվազովսկու մասնակցութեամբ:

³² Սան Ստեֆանօ՝ Կ.Պոլսին մօտ արուարձան:

³³ Մրբունի Տիւսաթ (1841-1901)՝ գրող, հեղինակ *Մայտա*, *Սիրանոյշ* եւ *Արաքսիա Կամ Վարժուհին* վեպերի: Գ. Ապտուլյահը բարեկամական եւ նամակագրական կապ է ունեցել Տիւսաթի հետ, որից մեզ են հասել Տիւսաթի գրած 12 նամակների հրապարակումները (տե՛ս՝ Տայեցի, էջ 105-112, 129-132):

³⁴ Գեորգ եւ Յովսէփ Ապտուլյահները բացում են լուսանկարչական նոր տաղաւար Եգիպտոսի մայրաքաղաք Կահիրէում: Դա Եգիպտոսի խոփա Թեֆիք փաշայի եւ իր

տիկնոջ յաճախակի հրաւերների և ցանկութեան արդիւնքն էր: Մասնաճիւղը գործել է 9 տարի, մինչեւ 1895:

³⁵ Նկատի ունի Յովսէփ Ապտուլլահին:

³⁶ Արաքերէն կը նշանակէ մեռնիլ:

³⁷ Ապտուլլահները դեռ Պոլսում պատրաստում էին տեսարժան և պատմական վայրերի, ինչպէս նաեւ հնագիտական և արուեստի տարբեր նիւթերի լուսանկարների հաւաքածոներ: Այդ քաղաքացիական իր նրանց արուեստի գլխատըր յաջողութիւնն ու փայլը:

³⁸ Քաման, քաման – նորից, նորից (արաքերէն):

³⁹ Խօսքը Յովհաննէս Քինյ: Սկրեանի որդու մահուան մասին է:

⁴⁰ Խօսքը Թուրքիայի մասին է:

KEVORK ABDULLAH'S LETTERS TO FATHER HOVHANNES MEGERIAN
(Summary)

ANI KIRAKOSYAN

After its first appearance in the late 1830s in France, photography and the profession of picture taking spread quickly to reach the capital of the Ottoman Empire in the mid-1860s.

The first photography shop was inaugurated in Istanbul by the Armenian Abdullah brothers. Their grandfather, Asdvadzadur Hurmuzian, was a provisioner at the imperial court of Sultan Abdul Hamid. Due to pressures from the court staff, Asdvadzadur converted his name to its Turkish equivalent and was renamed Abdullah.

By the late 1860s the Abdullah brothers had become renowned in the Empire due to their extensive investment and the souvenir photos they took of historic sites in the Ottoman capital.

Becoming the imperial photographers of the Sultan brought them further fame at a time when the Armenian Question became a part of the Eastern Question.

Eventually a wide spectrum of European political figures and newspaper correspondents who visited Istanbul had to have their pictures taken by the Abdullaha. The latter grasped this opportunity to raise and echo the concerns and aspirations of their co-nationals, the Western Armenians, who suffered from inequality, persecution, an insecure life and dispossession.

Kirakosyan puts into circulation seven unpublished letters of Kevork Abdullah addressed to Father Hovhannes Megerian, a high functionary of the Armenian Patriarchate of Constantinople. In these letters Kevork asks Father Megerian to join him in various appointments he took to raise Armenian concerns.